**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ**-25/15

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ** N 1: Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված 10-րդ և 33-րդ չափաբաժինների մասով՝ տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն**: 10-րդ և 33-րդ չափաբաժինների մասով՝ տեխնիկական բնութագրերը շարադրվել են նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

- 10-րդ չափաբաժին՝ «ДИП-01К У2 տիպի Ներքին սնուցման աղբյուր ДЖТИ 435.251.001-01, ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության: Տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը»,
- 33-րդ չափաբաժին՝ «Միկրոամպերմետր - ընդունելի տարբերակ է 1000 мкА դիապազոնով միկրոամպերմետրը, որը հավասարազոր է 1мА դիապազոնին: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության: Տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է մատակարարը»:

**Փոփոխության հիմնավորում**: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Թադևոսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 09)
Էլ. փոստ՝ a.tadevosyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ